Արձանագրության 4

Կենտրոն վարչական շրջանի համար մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ՀՄԱԾՁԲ-19/4» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

20.03.2019թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ներսիսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մուրադյան /գնահատող/, Մ. Սարգսյան /գնահատող/
Մ. Մալխասյան /բացող/, Ե. Մաթևոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Ս. Ներսիսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:

2. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ս. Ներսիսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
ԱՁ Մարինե Կույումջյան Միհրանի	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

3. «ԵՔ-ՀՄԱԾՁԲ-19/4» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ս. Ներսիսյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ **ԵՔ-ՀՄԱԾՁԲ-19/4** ծածկագրով ընթացակարգի 1-3 չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել Մարինե Կույումջյան Միհրանի Ա/Ձ-ին և վերջինիս ներկայացնել **Կենտրոն վարչական շրջանի համար մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման** պայմանագիր կնքելու առաջարկ:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ս. Ներսիսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:40-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5,դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ս. Ներսիսյան

Անդամներ՝ ---------- Ե. Մաթևոսյան

---------- Մ. Սարգսյան

---------- Ա. Մուրադյան

---------- Մ. Մալխասյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան